ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏ

«10» «մայիսի» 2024թ. N 151-Ձև

Հ Ր Ա Մ Ա Ն

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի պահանջներով, շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի հունվարի 11-ի N 14-Լ հրամանի հավելվածի 17-րդ կետի 10-րդ ենթակետով և հիմք ընդունելով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հաշվարկի և վերլուծության վարչության պետ Էդուարդ Կարապետյանի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Էկոպարեկային ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հաշվարկի և վերլուծության վարչության (այսուհետ՝ Վարչություն) փորձագետի աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Պարտականությունները կատարող՝ Ա. Սիրադեղյան

Ստորագրող
ԱՐՏՅՈՒՇԱԿ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ
8010820164

2024-05-10 16:40:17 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

«10» «մայիսի» 2024թ.
ք.Երևան

Հավելված
Էկոպարեկային ծառայության պետի
2024 թվականի մայիսի 10 - ի N 151 - Ա հրամանի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ

1. ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԴԵՊՔԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Փորձագետ (այսուհետ՝ Փորձագետ) ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է Ծառայության կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթի իրականացման ծավալների կտրուկ ավելացմամբ:

2. ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.
- բարձրագույն կրթություն.
- Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ բնապահպանության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ.
- համակարգչով աշխատելու ունակություն, ռուսերեն լեզվի իմացություն.
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի, «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին», «Էկոպարեկային ծառայության մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Բուսական աշխարհի մասին», «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի «Հայաստանի Հանրապետության կենդանիների կարմիր գիրքը հաստատելու մասին» N 71-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի «Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գիրքը հաստատելու մասին» N 72-Ն, շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի հունվարի 11-ի «Շրջակա

միջավայրի նախարարի 2018 թվականի հունիսի 22-ի N 172-Լ հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու, էկոպարեկային ծառայության կանոնադրությունը հաստատելու և շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 488-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 14-Լ հրամանի և այլ իրավական ակտերի իմացություն:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

Փորձագետը ներգրավվում է վեց ամիս ժամկետով:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

1) Փորձագետը վեց ամսվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

ա. բնապահպանական օրենսդրության խախտման վերաբերյալ արձանագրության կազմման և բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափի հաշվարկման գործընթացի նկատմամբ հսկողություն,

բ. սահմանված ժամկետում իրավախախտողի կողմից, բանկային համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վնասի հատուցման գործընթացի նկատմամբ հսկողություն,

գ. բնապահպանական օրենսդրության միասնական կիրառումն ապահովելու նպատակով մեթոդական աջակցության տրամադրում,

դ. հաշվարկված վնասի գումարի հատուցումն ապահովելու նպատակով իրականացվող աշխատանքներին (հայցադիմումների կազմում, դատական ներկայացուցչություն և այլն) մասնակցություն,

ե. վարչության կողմից իրականացվող այլ ընթացիկ աշխատանքներ,

2) Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Փորձագետը երեք ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություններ: Պայմանագրի գործողության շրջանակում վերջին կիսամյակի հաշվետվությունը ներկայացնում է պայմանագրի ժամկետի լրանալու նախորդ օրը:

6. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ երեք ամիսը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է երեք ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների

հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի առաջին կետի՝ «ա»-«ե» ենթակետերով սահմանված արդյունքների:

Համապատասխանաբար, վերջնարդյունքների չափանիշներն են՝

ա. օրենսդրությամբ սահմանված պահանջների միասնական կիրարկումը,

բ. հատուցված վնասը,

գ. տրված մեթոդական ցուցումներ, հանձնարարականներ և պարզաբանումներ, կազմված ուղեցույցներ և այլն,

դ. բնապահպանական իրավախախտումների դեպքերի նվազումը,

ե. կազմված հայցադիմումներ: